«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Տիգրանակերտ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ fctigranakertmartuni@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13.03.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նազելի Արսենյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	Ա-008
Խախտում՝	1. «ՖԱ Տիգրանակերտ» թիմի գլխավոր մարզիչ Տիգրան Գրիգորյանի (9157) կողմից վիրավորական արտահայտություններ հնչեցնելը մրցավարի հասցեին (Հավելված 1 Ծ, 13-րդ կետ) 2. «ՖԱ Տիգրանակերտ» թիմի մեղքով (հայտավորված երկրորդ մարզիչ չունենալը) խաղի չշարունակվելը (Հավելված 1 Խ, 12-րդ կետ) 3. Առաջնության ընթացքում երեք տեխնիկական պարտություն ստանալը (Հավելված 1 Խ, 4-րդ կետ)
Առաջնություն՝	ՍՖԱ Ա լիգա 2024/25
Խաղ՝	«Արարատի Արաքս» - «Ֆա Տիգրանակերտ», 02.03.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 21-րդ հոդվածի 3-րդ կետը համակցել 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով մատնանշված կարգապահական խախտումների համար նախատեսված պատասխանատվության միջոցները: «ՖԱ Տիգրանակերտ» թիմի գլխավոր մարզիչ Տիգրան Գրիգորյանին (9157) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի մարտի 2-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): «ՖԱ Տիգրանակերտ» թիմի գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով: «ՖԱ Տիգրանակերտ» թիմին հեռացնել առաջնությունից և զրկել տվյալ մրցաշրջանում ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր

մրցաշարերին մասնակցելու իրավունքից։ «Տիգրանակերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսունապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

<u>Ծանուցում</u>

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում։
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց։ Նշված վճարը վերադարձման ենթակա չէ։
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը։ Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության։
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից։